

we all need



for healthy, thriving and engaged communities

# ԱՌՈՂՋ, ԱՊԱՅՈՎ ԶԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԲԱՐԳԱՎԱԾՈՂ ՁԲՈՍԱՅԳԻՆԵՐ ՈՒՆԵՆ

## Ձբոսայգիները հզորացնում են համայնքները

Ձբոսայգիները համայնքներին տալիս են անհամար առողջապահական, սոցիալական, բնապահպանական և տնտեսական օգուտներ: Հարուստ Ձբոսայգիներ և որակյալ հանգստի վայրեր ունեցող համայնքները բարգավաճում են:

### Բարելավվող առողջություն

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ լավ պահպանված մատչելի Ձբոսայգիների առկայությունը մեծացնում է ֆիզիկական ակտիվությունը երեխաների և չափահասների շրջանում:<sup>1</sup> Ֆիզիկական գործունեությունը խիստ կարևոր է լավ առողջության համար՝ կյանքի բոլոր փուլերում: Ֆիզիկական գործունեությունը բարելավում է ընդհանուր առողջությունը, կանխում է գիրությունն ու շաքարախտը, նվազեցնում է բարձր ճնշման և սրտի հիվանդության վտանգը, նվազեցնում է երեխաների ու շաքարախտի պակասի մակարդակները, բարելավում է ճանաչողական կարողությունը և նվազեցնում է ագրեսիվ վարքը:

Ձբոսայգիների մոտակայքում ապրող դեռահասների 30%-ը ավելի հավանական է որ կկատարեն ֆիզիկական վարժության առաջարկված չափսը:<sup>2</sup> Բայց Լոս Անջելեսի շրջանի ավելի քան 1.5 միլիոն երեխա հանրային Ձբոսայգուց քայլելու հեռավորությամբ չեն ապրում:<sup>3</sup> Իսկ Ձբոսայգիներով աղքատ համայնքներում բնակիչների ոչ պակաս քան 30%-ը գեր է:<sup>4</sup> **Լոս Անջելեսի շրջանի ավելի շատ Ձբոսայգիների և հանգստի գոտիների անհետաձգելի կարիք ունի՝ ցածր եկամտով համայնքներում, որտեղ առողջության բարելավումն ու քրոնիկ հիվանդությունների կանխարգելումը կարող են մեծ ազդեցություն ունենալ բուժսպասարկման գների իջեցման և համայնքային բարօրության բարելավման վրա:**

### Համայնքային համախմբվածության աճ

Բոլոր նախապատմություններով և բոլոր տարիքի մարդիկ օգտվում են միևնույն Ձբոսայգուց, շփվելով և մեկը մյուսից սովորելով սոցիալական այնպիսի մթնոլորտում, որը նրանց խրախուսում է ավելի ակտիվ լինել: Դա ճիշտ է Ձբոսայգուց օգտվելու ժամանակ և նույնիսկ ավելի ճիշտ, երբ մարդիկ մասնակցում են տեղական Ձբոսայգիների կողմից տրամադրվող բազմաթիվ ծրագրերից մեկին: Ձբոսայգիները համայնքները միավորում են՝ ստեղծելով ավելի ապահով և ուժեղ թաղամասեր:

(հաջորդ էջ)



## ԼՍԵԼԻ՝ ԴԱՐՁՐԵՔ ՁԵՐ ԶԱՅՆԸ

Շրջանը և բոլոր 88 քաղաքները ներկայումս ուսումնասիրում են այն, ինչ ունենք՝ Ձբոսայգիներ, հանգստի գոտիներ, բաց տարածք և մշակութային ու կատարողական արվեստի վայրեր: Ի՞նչ է Ձբոսայգու վիճակը և ինչ կարծենա այն լավ վիճակի բերելը: Բնակիչները 10 րոպե քայլելու հեռավորությամբ Ձբոսայգի ունե՞ն: Արդյոք Ձբոսայգին օգտագործվո՞ւմ է իր կարողության սահմաններից դուրս՝ բարելավման կամ տարբեր հարմարությունների կարիք ունենալով: Այս գնահատումը մեր Ձբոսայգիների ներկա կարգավիճակի լավ պատկեր կտրամադրի:

Մենք կարիք ունենք լսելու, թե բնակիչները ինչ են ցանկանում և ինչի կարիք ունեն մեծ, լավ օգտագործված Ձբոսայգիներ և հանգստի գոտիներ ապահովելու համար:

Դեկտեմբերից մինչև վաղ փետրվար, շրջանն ու քաղաքները կվարեն կարիքների գնահատման համարյա 200 ժողով: **Սա փոփոխության եզակի հնարավորություն է մի սերնդի կյանքում՝ ձևավորելու առաջնահերթություններն առ այն, թե Ձբոսայգիների ֆինանսավորումը որտեղ պետք է հատկացվի առաջիկա տասնամյակներին:**

**Քաջալերեք բոլորին՝ ներկա լինելու համայնքային հանդիպման**

Պարզեք, թե որտեղ և երբ.  
LACountyParkNeeds.org



ՁԲՈՍԱՅԳԻՆԵՐԻ ԵՎ ԶԱՆԳՍԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԶԱՄԱՊԱՐՓԱԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՄԲՈՂՋ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ԵՐՁԱՆՈՒՄ

we all need



for healthy, thriving and engaged communities



LACountyParkNeeds.org

**Քարելավել մթնոլորտը**

Երբ անձրևը դուրս է հոսում ճանապարհներից և սալարկված գոտիներից, այն աղտոտիչ նյութեր է հավաքում, որոնք հետո հոսում են դեպի մեր գետերը, լճերը և ծովափերը: Ինչ վերաբերում է չսալարկված գոտիներին, զբոսայգիները կարևոր դեր են կատարում անձրևաջրերը հավաքելու և պահելու գործում՝ թույլ տալով որ այն ներծծվի գետնի մեջ, որտեղ այն բնականորեն մաքրվում է: Ծառերն ու թփերը զբոսայգիներում նույնպես մաքրում են օդային աղտոտիչները՝ բարելավելով մեր շնչած օդը և օգնելով նվազեցնել ջերմոցային գազերը:

**Ուժեղացնել տնտեսությունը**

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գերազանց զբոսայգիների մոտ գտնվող տների գույքային արժեքները կարող են լինել մինչև 15% ավելի բարձր, քան նմանատիպ այն տների գները, որոնք զբոսայգու մոտ չեն: Քաղաքները նույնպես օգուտ են ստանում ավելի բարձր գույքային հարկերից: Լոս Անջելեսի շրջանը նաև գրավում է զբոսաշրջիկներին ծովափերով և մեծ զբոսայգիներով՝ հզորացնելով տեղական բիզնեսները և վաճառքներից ու հյուրանոցներից հարկային եկամուտ ստեղծելով:

**Դեպի զբոսայգիների հավասարություն**

Սակայն, Լոս Անջելեսի ոչ բոլոր բնակիչներն են հավասարապես օգտվում զբոսայգիներից: Ծրջանի բնակչության միայն 15%-ը հետիոտնի համար նախատեսված ճանապարհի մատչելիություն ունի դեպի զբոսայգիներ կամ կանաչ գոտիներ: Մինչ զբոսայգու տարածքի պետականորեն ընդունված չափորոշիչը 4 ակր է (1 ակրը = 4047 մ2)՝ յուրաքանչյուր 1.000 մարդու համար, բազմաթիվ համայնքներ չեն հասնում դրան: Հիմնականում աֆրոամերիկյան համայնքներն ունեն ընդամենը 1,7 ակր, իսկ լատինոամերիկյան համայնքներն՝ ընդամենը 0,6 ակր՝ յուրաքանչյուր 1.000 հոգու համար:<sup>5</sup>

<sup>1</sup> Այս տեղեկություններից շատերը վերցված են 2009թ. կատարված «Քաղաքային զբոսայգիների համակարգի տնտեսական արժեքի չափումը» ուսումնասիրությունից և 2011թ. «Առողջության գոտիներից մինչև բժշկական երկար ճանապարհը. ինչպես քաղաքային զբոսայգիները կարող են լավագույնս սատարել առողջությանը և բարեկեցությանը» ուսումնասիրությունից՝ երկուսն էլ կատարված «Trust for Public Land» կազմակերպության կողմից:

<sup>2</sup> 2013թ. մարտին կատարված «Ֆիզիկական գործունեություն, զբոսայգիների մատչելիությունն օգտագործում Կալիֆոռնիայի դեռահասների կողմից» ուսումնասիրությունից՝ իրականացված UCLA-ի Առողջության քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից:

<sup>3</sup> «Զբոսայգիներ Լոս Անջելեսի ժողովուրդի համար. աշակցության համար նախատեսված դեպք» ուսումնասիրությունից՝ կատարված «Trust for Public Land» կազմակերպության կողմից, 2004թ.:

<sup>4</sup> 2011թ. սեպտեմբերին կատարված «Գիրությունը և դրան առնչվող մահացության դեպքերը Լոս Անջելես շրջանում» ուսումնասիրությունը՝ իրականացված Լոս Անջելես շրջանի Զանրային առողջապահության բաժանմունքի կողմից, և 2004թ կատարված «Համայնքի ֆիզիկական գործունեության շրջանակների և ցեղի, ազգային պատկանելության և սոցիալ-տնտեսական կարգավիճակի միջև եղած հարաբերությունը» ուսումնասիրությունը՝ իրականացված «Evidence-Based Preventive Medicine»-ի կողմից:

<sup>5</sup> Ջենիֆեր Վոլչի, Ջոն Փ. Վիլսոնի և Ջեդ Ֆեյրենբախի «Զբոսայգիները և զբոսայգիների ֆինանսավորումը Լոս Անջելեսում. հավասարության բարոնտեգավորման վերլուծություն» ուսումնասիրությունից՝ իրականացված «Urban geography 26»-ի կողմից, թիվ 1 (2005թ.), էջ 4-35:



ԶՐՈՍԱՅԳԻՆԵՐԻ ԵՎ ՀԱՆԳՍԻ ԿԱՌԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՄԲՈՂՁ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ԵՐՁԱՆՈՒՄ